

ճաշին մէջ կը կրէր «զվարակաւորն», որ է սուրը (Խոր. 250): Երբ Պարսից Խոսրովու խորանին առջև մամիկոնեան Մուշեղի (է դարու քաջին) կ'առաջարկէին հանել զէնքերն ու կամարն՝ որմէ կախուած էին անոնք, մերժեց՝ ըսելով. « Լուծից զկամարս եւ զգօտիս յանձնէ իմմէ, զոր ոչ երբեք լուծեալ է իմ ի տան իմում յորախոռքեան» (Սեր. 72). զասոնք հանելը՝ կը նշանակէր զէնքերն իսկ հանել:

Աղքատներն անգամ՝ զորս կը հրաւրէր Ս. Ներսէս, փոխան իրենց պատանաւորներն զրգլեկաց՝ «պատեր», կ'ըսէ Փաւստոս (77), զոր ես կը հասկանամ՝ թէ չափաւոր զգեստ մը կը հագցնէր, որպէս զի խնճոյից հանդերձանքը կատարեալ լինէր նոյն իսկ այդ թշուառ դասուն վըրայ: Նոյնը նաեւ բիւզանդացի ազնուականաց, որ իրենց հանդերձից բովանդակ պերճութեամբ կը նստէին հացկերութի, կը խրատէր Ոսկերերան՝ ըսելով. «Փոխեա ե տուր սուրբ պատմուճան» (Թղթ. Ա, 529):

Գ. Գիտելի է սակայն՝ որ Եղիշէի օրով չքաւորութեան մատնուած տիկնայք հրաժարելով իրենց սովորական խնճոյքներէն, անոնց յարակից յարդարանքներն ալ մէկ կողմ թողած էին, նոյն իսկ եւ զանոնք՝